Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2024 թվականի հունվարի 15-ի թիվ 15-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2024 թվականի հունվարի 19-ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի հեռախոսազանգերի կենտրոն՝ 010 59 33 33 , 060 27 33 33 հեռախոսահամարներով:

ՀՀ ՌԵԶԻԴԵՆՏ ԵՎ ՀՀ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏ [1] ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ VISA PLATINUM BUSINESS ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ [2]

	Քարտի տեսակ	Visa Platinum Business
1.	Քարտի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո, ՌԴ ռուբլի
2.	Քարտի թողարկում 2-5 բանկային օրվա ընթացքում [3]	Անվճար
3.	Քարտի գործողության ժամկետ	5 տարի
4.	Քարտի շտապ թողարկում մեկ բանկային օրվա ընթացքում[4] (ՀՀ դրամ)	10,000
5.	Քարտային հաշվի բացում	Անվճար

[1] **Եթե հաճախորդը համապատասխանում է ստորև նշված նկարագրին, ապա վերջինիս նկատմամբ կիրառվում են ՀՀ ոչ ռեզիդենտ հաճախորդների համար սահմանված սակագները.**

1. **ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալում գումարային 50 տոկոս և ավելի մասնակցություն ունեն՝**
   - ✓ **օտարերկրյա քաղաքացիները, և/կամ**
   - ✓ **ՀՀ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք, և/կամ**
   - ✓ **ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձը, որի կանոնադրական կապիտալում գումարային 50 տոկոս և ավելի մասնակցություն ունեն օտարերկրյա քաղաքացիներ կամ ՀՀ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք:**
2. **Օտարերկրյա քաղաքացի հանդիսացող ՀՀ-ում գրանցված Անհատ ձեռնարկատեր,**
3. **Հաճախորդ, որի իրական շահառուն հանդիսանում է օտարերկրյա քաղաքացի:**

[2] Բանկը Վճարային քարտը տրամադրում և սպասարկում է Բանկում ՀՀ դրամ արժույթով ընթացիկ բանկային հաշիվ ունեցող հաճախորդների համար: Բանկային հաշվի բացման և սպասարկման պայմանները սահմանվում են համաձայն սակագների:

[3] Քարտի ակտիվացումը կատարվում է համաձայն Բանկի «Վճարային քարտերի սպասարկման» կանոնների (այսուհետ տեքստում՝ Կանոններ)՝ հետևյալ հղմամբ՝ Կանոններ:

[4] Քարտի շտապ տրամադրումն իրականացվում է միայն Բանկի Վարդանանց մասնաճյուղում: Հասցե. ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13, հեռախոսահամարներ՝ +37410 593333 , +37460 273333

6.	Քարտային հաշվի սպասարկման տարեկան վճար[5] [6] (ՀՀ դրամ)*	**ՀՀ ռեզիդենտ հաճախորդի համար**	**ՀՀ ոչ ռեզիդենտ հաճախորդի համար**
		60,000	100,000
7.	Քարտային հաշվի սպասարկման ամսական վճար[5] [6](ՀՀ դրամ)*	6,000	10,000
8.	Քարտային հաշվի չնվազող մնացորդ	Չի սահմանվում	
9.	Քարտային հաշվի դրական մնացորդին հաշվարկվող տոկոսադրույք	**Տարեկան պարզ տոկոսադրույք**	**Տարեկան տոկոսային եկամտաբերություն**
		0%	0%
10.	Կից քարտի տրամադրում (ՀՀ դրամ)	Անվճար	20,000
11.	Կցված քարտի սպասարկման տարեկան վճար (ՀՀ դրամ)	3,000	10,000
12.	Քարտի արգելափակում	Անվճար	
13.	Քարտի ապաարգելափակում	Անվճար	
14.	Քարտի վերաթողարկում՝ ժամկետը լրացած քարտերի դեպքում	Անվճար	
15.	PIN ծածկագրի վերականգնում	Անվճար	
16.	Քարտի կրկնօրինակի տրամադրում՝ վնասված, շահագործման ոչ ենթակա, կորցրած/գողացած քարտի կամ PIN կոդի դեպքում (քարտի գործողության նույն ժամանակահատվածով) (ՀՀ դրամ)	10,000	
17.	Քարտի մուտքագրումը միջազգային STOP ցանկ (7 օրով մեկ տարածաշրջանում) (ՀՀ դրամ)	10,000	
18.	Քարտի ելքագրումը միջազգային STOP ցանկից	Անվճար	
19.	Քարտային հաշվի քաղվածքի տրամադրում	Համաձայն «ՀՀ ռեզիդենտ Իրավաբանական անձանց և Անհատ ձեռնարկատերերի բանկային հաշիվների, փոխանցումների և «ԱյԴի Բանկ» ՓԲԸ կողմից մատուցվող այլ ծառայությունների» սակագների	Համաձայն «ՀՀ ոչ ռեզիդենտ Իրավաբանական անձանց և Անհատ ձեռնարկատերերի բանկային հաշիվների, փոխանցումների և «ԱյԴի Բանկ» ՓԲԸ կողմից մատուցվող այլ ծառայությունների» սակագների
20.	SMS ծառայության միացում	Անվճար	
21.	Վճար յուրաքանչյուր SMS-ի համար[7]	15 ՀՀ դրամ	

[5] Քարտի սպասարկման վճարի գանձման պարբերականությունը սահմանվում է ամսական կամ տարեկան՝ ըստ հաճախորդի ցանկության: Բանկի իրավասու մարմնի/անձի համաձայնությամբ կարող է չգանձվել քարտի առաջին տարվա համար սահմանված սպասարկման վճարը:

[6] Քարտի սպասարկման վճարը գանձվում է անակցեպտ կարգով հաճախորդի՝ բանկում գործող բոլոր հաշիվներից, որի համար հիմք է ընդունվում տվյալ օրվա համար ԿԲ կողմից սահմանված փոխարժեքը:

[7] SMS հաղորդագրությունն ուղարկվում է 5,000 ՀՀ դրամ / 10 ԱՄՆ դոլար/ 10եվրո/1,000 ռուբլի և ավել գումարով գործարքների դեպքում, Հաճախորդի հանձնարարականի/դիմումի/ առկայության դեպքում սահմանաչափը կարող է վերանայվել:

22.	Քարտային հաշվի համալրում (Կանխիկ դրամական միջոցների մուտքագրում հաշվին)	Համաձայն ՀՀ ռեզիդենտ և ՀՀ ոչ ռեզիդենտ Իրավաբանական անձանց և Անհատ ձեռնարկատերերի բանկային հաշիվների, փոխանցումների և «ԱյԴի Բանկ» ՓԲԸ կողմից մատուցվող այլ ծառայությունների սակագների			
23.	Միջնորդավճար՝ Բանկի բանկոմատներից կանխիկ գումարի տրամադրման համար	**ՀՀ ռեզիդենտ հաճախորդի համար**		**ՀՀ ոչ ռեզիդենտ հաճախորդի համար**	
		Դրամային քարտերի դեպքում՝ 0.2% Արտարժույթային քարտերի դեպքում՝ 0.5%		2.5%	
24.	Միջնորդավճար Բանկի կանխիկացման կետերից (POS տերմինալ) և Առանց քարտի օգտագործման քարտային հաշվից կանխիկ գումարի տրամադրման համար (Կանխիկ դրամական միջոցների տրամադրում/ելքագրում հաշվից)	Համաձայն ՀՀ ռեզիդենտ և ՀՀ ոչ ռեզիդենտ Իրավաբանական անձանց և Անհատ ձեռնարկատերերի բանկային հաշիվների, փոխանցումների և «ԱյԴի Բանկ» ՓԲԸ կողմից մատուցվող այլ ծառայությունների սակագների			
25.	Միջնորդավճար ArCa համակարգի այլ բանկերի բանկոմատներից և կանխիկացման կետերից (POS տերմինալ) կանխիկ գումարի տրամադրման համար	1%		2.5%	
26.	Միջնորդավճար ArCa համակարգի անդամ չհանդիսացող և արտերկրի բանկերի բանկոմատներից և կանխիկացման կետերից (POS տերմինալ) կանխիկ գումարի տրամադրման համար	1.5%, նվազագույնը 1,500 ՀՀ դրամ		3.5%, նվազագույնը 5,000 ՀՀ դրամ	
27.	Միջնորդավճար Բանկոմատների, www.arca.am կայքի միջոցով Բանկի քարտից ArCa համակարգի անդամների քարտերին փոխանցումների դեպքում	0.5%		2.5%	
28.	Քարտով կատարվող անկանխիկ վճարումներ առևտրի/սպասարկման կետերում՝ ներառյալ ինտերնետ/վիրտուալ միջավայրում	Անվճար			
29.	Կանխիկացման օրական սահմանաչափ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	եվրո	ՌԴ ռուբլի
		5,000,000	10,000	10,000	600,000
30.	Կանխիկացման գործարքների օրական քանակ	10			
31.	Կանխիկացման օրական սահմանաչափի և/կամ գործարքների օրական քանակի վերանայում՝24 ժամով	Անվճար			
32.	Կանխիկացման օրական սահմանաչափի և/կամ գործարքների օրական քանակի վերանայում՝ մշտական	1,000 ՀՀ դրամ		5,000 ՀՀ դրամ	
33.	Քարտային հաշվի փակում և քարտի վերադարձ	Անվճար			
34.	IDBusiness առցանց համակարգի միացում	Անվճար			
35.	Ճամփորդական ապահովագրություն [8]	Համաձայն հղումով https://cis.visa.com կայքի սահմանման			
36.	Անվճար Visa Lounge Key ծրագիր[9]	2 մուտք			
37.	Միջազգային կոնսիերժ ծառայություն[10]	Անվճար			
38.	Visa Premium դասի քարտի այլ հավելյալ արտոնություններ և պայմաններ	https://cis.visa.com/ru_TJ/pay-with-visa/commercial-visa-cards/visa-platinum-business.html			
39.	Քարտի և ծածկագրի առաքման սակագին	5,000 ՀՀ դրամ-յուրաքանչյուր ուղարկվող ծրարի համար[11]			

[8] Տե՛ս Ընդհանուր պայմաններ, կետ 8:

[9] Օրացույցային տարվա ընթացքում անվճար մուտքերի քանակը սահմանվում է Visa վճարային համակարգի կողմից՝ տվյալ պահին գործող պայմաններով:

[10] Ծառայությունից օգտվելու համար հարկավոր է գրանցվել Telegram-ի VisaConsierge-ում, անցնել նույնականացում և 24/7 ձևաչափով օգտվել կոնսիերժի ողջ հնարավորությունից:

[11] Քարտը և ծածկագիրը առաքվում են առանձին ծրարներով: Բացի նշված սակագնից Հաճախորդի հաշիվներին պետք է առկա լինի նաև բավարար գումար առաքման ծառայության համար:

Ընդհանուր պայմաններ

1. Երկքաղաքացիություն ունեցող Անհատ ձեռնարկատեր հաճախորդների, ինչպես նաև իրավաբանական անձ հաճախորդի՝ երկքաղաքացիություն ունեցող մասնակիցների դեպքում, Հաճախորդի նույնականացման համար հիմք է ընդունվում ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված քաղվածքում գրանցված անհատ ձեռնարկատեր հաճախորդի, իսկ իրավաբանական անձ հաճախորդի դեպքում՝ վերջինիս մասնակիցների՝ անձը հաստատող փաստաթուղթը (եթե անձը գրանցված է օտարերկրյա անձնագրով, ապա անձը դիտարկվում է որպես օտարերկրյա քաղաքացի):
2. Սույն տեղեկատվական ամփոփագրով չսահմանված սակագները և պայմանները սահմանվում են ՀՀ ռեզիդենտ և ՀՀ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց և Անհատ ձեռնարկատերերի բանկային հաշիվների, փոխանցումների և ԱԴԻ Բանկ ՓԲԸ կողմից մատուցվող այլ ծառայությունների սակագների **տեղեկատվական ամփոփագրերով** և **Բանկային հաշիվների բացման և սպասարկման կանոններով:**
3. Քարտը տրամադրվում է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին:
4. Քարտային հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկված տոկոսները վճարվում են ամսական հաճախականությամբ:
5. Քարտային հաշվի գումարի նկատմամբ տոկոսները հաշվեգրվում են գումարը մուտքագրելու օրվանից մինչև այն հաճախորդին վերադարձնելու կամ հաճախորդի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:
6. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:
7. **Ուշադրություն՝ Հաճախորդի հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանա հաճախորդը՝ իր կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և սահմանված պարբերականությամբ վաստակած տոկոսագումարները ստանալու արդյունքում: Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգը կարող եք գտնել հետևյալ հղմամբ՝** **Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկ:**
8. Ներառված է մինչև $50,000 ծախսեր, կապված բժշկական օգնության հետ, մինչև $500,000 ծախսեր, կապված տարհանման և հայրենադարձության հետ, մինչև $1,000 անհետաձգելի ատամնաբուժական ծախսեր, մինչև $1,000 անձնական ունեցվածքի կորուստ, մինչև $100 փաստաթղթերի կորուստ, $500 թռիչքի ուշացում, մինչև $100,000 դժբախտ պատահար, մինչև $250 ուղեբեռի ուշացում, որոնք սահմանվում են Visa վճարային համակարգի կողմից տվյալ պահին գործող պայմաններով:
9. Միջազգային կոնսիերժ ծառայություն. 24/7 շուրջօրյա տեղեկատվության տրամադրում, տոմսերի ամրագրում և այլ ծառայություններ՝ անձնական օգնականի միջոցով:
10. Բանկի և հաճախորդի միջև ծագած վեճերը կարգավորվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով: Կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ Էլ. փոստ՝ info@fsm.am Հեռախոս՝ (+37460) 70-11-11 Ֆաքս՝ (+37410) 58-24-21:
11. ***Բանկը համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի քաղաքականության հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:***
12. ***Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:***
13. SMS հաղորդագրության և էլեկտրոնային հասցեի ակտիվացման համար անհրաժեշտ է այցելել (անձը հաստատող փաստաթղթով) Բանկի ցանկացած մասնաճյուղ և լրացնել համապատասխան դիմում:
14. Անհրաժեշտության դեպքում Քարտը կարող է առաքվել ՀՀ տարածքում կամ ՀՀ տարածքից դուրս Հաճախորդի նախընտրելի հասցեով: Ընդ որում Բանկը իրավասու է Հաճախորդի Բանկում գործող բոլոր հաշիվներից անակցեպտ կարգով գանձել առաքման ծառայության վճարները:
15. Բանկի և հաշվետիրոջ միջև վարկային պարտավորությունների առկայության դեպքում քարտային հաշվից դրամական միջոցները անակցեպտ գանձվում են վարկային պայմանագրով նախատեսված կարգով:
16. **Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:**
17. Հաշվի քաղվածքը ստանալուց 15-օրյա ժամկետում հաշվի հետ կապված գործառնություններում անճշտություններ հայտնաբերելու դեպքում հաճախորդը Բանկին կարող է ներկայացնել բողոքարկում: Նշված ժամանակահատվածում բողոքարկումները չստանալու դեպքում Բանկը քաղվածքը համարում է ընդունված: Բողոքարկումը ներկայացվում է Բանկին գրավոր դիմումի տեսքով: Սահմանված ժամկետում ստացված բողոքարկման դիմումը Բանկն ընդունում է կատարման՝ իրականացնելով տեղական և միջազգային վճարային համակարգի կանոններով սահմանված համապատասխան գործողությունները:
18. Քարտի կորստի դեպքում հաճախորդը պետք է հնարավորինս սեղմ ժամկետում հեռախոսակապի միջոցով կամ այլ հնարավոր եղանակով տեղյակ պահի.

- **«ԱրմենիանՔարդ» ՓԲԸ պրոցեսինգային կենտրոնին (010) 592222 շուրջօրյա հեռախոսահամարով կամ**
- **Զանգահարի Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն (010) 59 33 33 շուրջօրյա հեռախոսահամարով կամ**
- **անձնագրով այցելի Բանկի ցանկացած մասնաճյուղ**

Հաճախորդի կողմից քարտի կորստի մասին հեռախոսակապի միջոցով հայտնելու պահին քարտով գործարքների իրականացումը անմիջապես կկասեցվի:
Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանին հասցրած այն վնասի համար, որը կատարվել է քարտը կորցնելու և Բանկ հայտնելու միջև ընկած ժամանակահատվածում: Քարտի գործողության կասեցումից հետո հաճախորդը պետք է այցելի Բանկ և ներկայացնի քարտի կորստի մասին գրավոր դիմում, որի հիման վրա Բանկը հաճախորդին 2-5 բանկային օրվա ընթացքում կտրամադրի նոր քարտ:
Մանրամասն տես Բանկի «Վճարային քարտերի սպասարկման կանոններում»՝ հետևյալ հղմամբ՝ Կանոններ

19. Այլ բանկերի բանկոմատներից և POS տերմինալներից գումարի կանխիկացման ժամանակ սպասարկող բանկի կողմից կարող են կիրառվել հավելյալ միջնորդավճարներ:
20. Այլ բանկերի բանկոմատներից քարտից քարտ կատարվող փոխանցումների ժամանակ սպասարկող բանկի կողմից կարող է գանձվել հավելյալ միջնորդավճար:
21. Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ **Մասնաճյուղեր և Բանկոմատներ:**
22. Բանկի կողմից հեռավար սպասարկումն իրականացվում է IDBusiness Mobile հավելվածի և Բանկ-հաճախորդ (IDBusiness Online - https://online.idbank.am/ առցանց համակարգի միջոցով: Բանկի հեռավար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են **«Հեռավար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»**
23. Վճարային քարտի ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ.
    - ✓ վճարային քարտի ստացման դիմում-հայտ (օֆերտա),
    - ✓ Բանկային հաշվի բացման համար պահանջվող փաստաթղթեր՝ հղումով
24. Քարտի օգտագործման, պահպանման, փակման, վերաթողարկման, անվտանգության ապահովման, քարտով գործարքների բողոքարկման վերաբերյալ այլ դրույթները, որոնք սահմանված չեն սույն տեղեկատվական ամփոփագրում, սահմանված են **Կանոններով**, Բանկի կողմից վճարային քարտի թողարկման, տրամադրման և սպասարկման հետ կապված Բանկի և Քարտապանի միջև կնքվող պայմանագրով, ներքին իրավական ակտերով, և վճարահաշվարկային համակարգերի (ԱրՔա, Visa) կանոններով:
25. Բանկը պարտավոր է հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս վերջինիս տրամադրել Կանոնները:
26. Հաճախորդը չպետք է ներառված լինի Բանկի անցանկալի հաճախորդների ցանկում: Բանկի անցանկալի հաճախորդ դասակարգելու վերաբերյալ իրավահարաբերությունները կարգավորվում են «Բանկի կողմից հաճախորդին անցանկալի դասակարգելու չափանիշները սահմանելու և նրանց հետ հարաբերությունների կառավարման վերաբերյալ» ընթացակարգով:
27. ԱՁ-ի դեպքում քարտային հաշվում առկա միջոցների վերադարձելիությունը երաշխավորվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն:

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից՝ հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝				
Ավանդի արժութային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժու-թային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն ՀՀ դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ